

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Աստուծոյ
դրկութեամբ
մարդ մը



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Օրին մէկը Աստուծոյ տաճարին
մէջ ծերունկ քահանայ մը կար, որուն
անունը Չաքարեա էր եւ խունկ
կը վառէր: Դուրսը ժողովուրդը
կ'աղօթէր: Յանկարծ
Չաքարիա թողաց:



Հրեշտակ մը եկաւ: Ան ըսաւ. "Մի՛ վախնար":
"Աստուած ինձի դրկեց: Քու կինդ տղայ մը պիտի
ծնի, Յովաննու կոչէ զայն:



Ան Սուրբ Հոգիով պիտի լեցուի իր ծնունդէն: Ան
շատ մը մարդիկ Աստուծոյ պիտի դարձնէ":



"Մեր հետը խօսիր, Չաքարիա": Ժողովուրդը
դուրսը շուարած էր: Անոնք չէին
գիտեր, որ հրեշտակը ըսաւ, որ
Չաքարիա պիտի չկարենայ
խօսիլ մինչեւ որ անոր
զաւակը ծնի, որովհետեւ
ան Աստուծոյ լուրին
չհաւատաց:



Ան կարծեց, որ իր կինը արդէն ծեր
է եւ անկարելի է գաւակ ծնի:




Տունը, Չաքարիա գրեց ան ինչ
որ հրեշտակը իրեն ըսավ: Իր կինը
Էլիզապեթ շատ զարմացած էր: Անունք
միշտ կ'աղօթեին զաւակ մը ունենալու:
Կրնա՞յ այդ փափաքը իրականանալ:





Շուտով Էլիզապեթ
գիտցաւ, որ զաւակ
մը պիտի ունենայ:
Ան փառք տուաւ
Աստուծոյ: Օրին
մէկը Էլիզապեթին
ազգականը Մարին
հիւրուբեան կու
գայ: Մարին ալ իր
կարգին զաւակ կը
սպասէր:





Երբ Մարին հասավ Էլիզապեթ
զգաց իր մանուկը փորին մեջ:
Էլիզապեթ լեցուած էր Սուրբ
Հոգիով: Ան լաւ գիտէր, որ
Մարիամին մանուկը,
որ պիտի ծնէր Տէր
Յիսուս Բրիստոսն
էր: Երկու կիները
միասին մեծ
ուրախութեամբ
փառք տուին
Աստուծոյ:



Աստուծոյ խոստումին համաձայն
Էլիզապեթին զաւակը ծնաւ. "Կոչէ
Չաքարիա, ինչպէս իր հայրը",
ըսին մնացեալ քահանաները:
Չաքարիա յիշեց Աստուծոյ
հրամանը. "Ոչ, պզտիկը
Յովաննու պիտի կոչուի":
Երբ Չաքարիա գրեց
այդ բառերը, ան
խօսելու սկսաւ:
Այդպէ ետք
Աստուծոյ
փառք
տուլաւ:



Երբ Յովհաննես
մեծցաւ, ան եղիային
սման էր: Աստուծոյ
մեծ մարդը: Յովաննու
ըսաւ ժողովուրդին, որ
Փրկիչը Մեսիա կու
գայ, որպէսզի օրհնէ
իրենց:



Յրեայ առաջնորդները
կ'ատէին Յովաննու,
որովհետեւ ան ըսաւ
անոնց. "Չղջացէ՛ք,
դադրեցէք մեղք գործել":
Անոնք չէին ուզեր լսել
իրենց մեղքերուն մասին:



Շատեր զինք կոչեցին Յովհաննու Մկրտիչը,
որովհետեւ ժողովուրդը ջուրին տակ իջեցուց
ցոյց տալու համար անոնց, որ անոնք
զոջացած են իրենց մեղքերուն համար:

Օրին մէկը Յիսուս եկաւ

Յովաննու, որպէսզի

մկրտուի: "Դուն
պէտք է մկրտես ինձի":

Յովհաննես մերժեց:

Սակայն

Յիսուս ըսաւ.

"Այդպէս թող

ըլլայ" եւ

Յովաննու

զինք մկրտեց:



Յիսուսի
մկրտութենէն
ետք, Յովաննու
տեսաւ Սուրբ Յոգին,
որ կու գայ Յիսուսին
վրայ աղաւնիի նման:
Այս Աստուծոյ նշանն
էր: Յովաննու գիտէր,
որ Յիսուս Աստուծոյ
որդին է: Յովաննու
Յիսուսը կոչեց
Աստուծոյ գառնուկը,
որ իր վրայ կ'առնէ
աշխարհի բոլոր
մեղքերը:





Յովհաննես շատեր
առաջնորդեց
Աստուծոյ, բայց
Յերովդէս, չար
կառավարիչը
Յովհաննէսը
բանտարկեց: "Մերք
ունի որ ամուսնանաս
Յերովդիային հետ,
որ քու եղբօրդ կինն
է", ըսաւ Յովհաննէս
Յերովդէսին:
Յերովդէս գիտէր,
որ ըսածը ճիշդ էր:







Ան գիտէր,
որ Յովհաննէս
Աստուծոյ ծառան
է, արդար եւ սուրբ
մարդ մը: Բայց ան
չէր ուզեր դադրիլ
մեղք գործելէ եւ
Յովհաննէս չէր
դադրեր քարոզելէ
մեղքին դէմ, նոյնիսկ
այդ արժէր
բանտարկուիլին:



Իր տարեդարձին Յերովդէս մեծ
խրախճանք մը սարքեց. Յերովդիայի
աղջիկը անոր համար պարեց: Ան
շատ գոհացուց Յերովդէսը: "Ինչ որ
փափաքիս կրնաս ուզել" խոստացաւ
Յերովդէս. "Նոյնիսկ իմ կէս
թագաւորութիւնս":







"Ի՞նչ պիտի
ուզեմ" մտածեց
աղջիկը: Իր
չարամիտ
մայրը
Յերովդիա,
որ կ'ատեր
Յովհաննեսը,
ըսաւ ինչ
որ պետք է
պահանջէ
սարսափելի
բան էր:



"Ինձի Յովհաննու Մկրտիչի գլուխը ամանի մեջ տուր", ըսաւ աղջիկը Յերովդէսին: Ան շատ ցաւ զգաց իր խոստումին համար, բայց շատ հպարտ էր, որ իր խոստումը չի կտրուի: "Գլխատեցէք Յովհաննէսին եւ գլուխը հոս բերէք" հրամայեց Յերովդէս: Անոր զինուորները հնազանդեցան իրեն:



Յովհաննէսին բարեկամները
թաղեցին այս Աստուծոյ քաջարի
եւ հաւատարիմ ծառային
մարմինը: Յովհաննէսին
գործը Աստուծոյ
համար հոս վերջ
գտաւ: Թերեւս
գիտէին, թէ
Յիսուս իրենց կը
հանգստացնէ
իրենց
դժբախտութենէն:



Աստուծմէ զրկուած մարդ մը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 1, 3, Մարկոս 6

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

